ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-548-03.04.2023-ՊԻ-011/0), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-548[1]-03.04.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԻԾ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերով՝ հաշվի առնելով փոփոխությունների մեկից ավելի լինելը և լրացումներ կատարելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում «շենքերի» բառից հետո լրացնել «շքամուտքի մոտ կամ շենքերի»:» բառերը: Լրացման նպատակն է ՀՀ դրոշը տեղադրել ավելի տեսանելի վայրում, նպատակ ունենալով նպաստել ՀՀ դրոշի նկատմամբ հարգանքի ձևավորմանը: Ըստ այդմ նախագծի հոդվածների համարակալումն առաջարկում ենք վերանայել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը (լրամշակված 2-րդ հոդված) առաջարկում ենք լրացնել նոր 6-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «6. Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականությունը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սահմանվում է հանրային իշխանության մարմիններում, ինչպես նաև ուսումնական հաստատությունների, պետական գիտական, մարզական և մշակութային կազմակերպությունների, պետության և համայնքի հիմնադրած այլ իրավաբանական անձանց աշխատանքային կարգապահական ներքին կանոններով:»: Լրացման նպատակն է Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականություն սահմանել նշված մարմինների աշխատանքային կարգապահական ներքին կանոններով, որոնց չպահպանումը հանգեցնելու է կարգապական պատասխանատվության:		

4.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով, համաձայն որի անհրաժեշտ է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 10-րդ հոդվածում կատարել փոփոխություններ հետևյալ բովանդակությամբ. 1) վերնագրի «Պատասխանատվությունը» բառը փոխարինել «Հսկողությունը և պատասխանատվությունը» բառերով. 2) 1-ին մասում «Սույն» բառից առաջ լրացնել «1.» թիվը. 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման հսկողությունն իրականացնում և պատասխանատվություն կիրառում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, եթե Հայաստանի Հանրապետության դրոշը տեղադրված, ամրացված	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կամ բարձրացված է շենքերի և շինությունների վրա կամ դրանցից դուրս կամ դրանց արտաքին հատվածի վրա:»: Առաջարկը արվում է՝ հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությունները, ըստ որի նշված վարչական իրավախախտման համար պատասխանատվություն կիրառելու լիազորությունը վերապահվել է ՀՀ ոստիկանությանը:		
5.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածի (նախկին 2-րդ հոդված) վերնագրում «Եզրափակիչ» բառից հետո լրացնել «և անցումային դրույթներ» բառերը, ինչպես նաև հոդվածը լրացնել 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հետո եռամսյա ժամկետում հանրային իշխանության մարմինները, ինչպես նաև ուսումնական հաստատությունների, պետական գիտական, մարզական և մշակութային կազմակերպությունների, պետության և համայնքի հիմնադրած այլ իրավաբանական անձինք աշխատանքային կարգապահական ներքին կանոններով սահմանում են սույն օրենքով Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականությունը:»: Առաջարկը արվում է՝ հաշվի առնելով նախագծի 1-ին (լրամշակված 2-րդ) հոդվածում կատարված լրացումը:		